ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
ДАШТСКИЙ СЕЛЬСКИЙ
МУНИЦИПАЛИТЕТ
АРМАВИРСКОГО
МАРЗА

Հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ,գ.Դաշտ,Մ.Մաշտոցի 34
Էլ. Փոստ՝ dasht.armavir@mta.gov.am,
Հեռախոս՝ +37494404402, +37495404402

Թիվ <<-64->>

<<10>> 07 2015թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ,

ՊԱՐՈՆ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

*Հարգարժան պարոն մարզպետ*

Կից Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Դաշտ գյուղական համայնքի 26.06.2015թվականին կայացած ավագանու թիվ 05 հերթական նիստում 2015թվականի բյուջեում կատարված փոփոխությունները:

Առդիր՝ 42 թերթ:

ԴԱՇՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

112.58/7556-1
10 07 2015

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«26» հունիսի 2015թ. — թիվ 03-Ն

### ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 03-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով , «Իրավական ակտերի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 3-րդ մասով.

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Դաշտ համայնքի ավագանու 2014թվականի դեկտեմբերի 15-ի «Դաշտ գյուղական համայնքի 2015թվականի բյուջեի հաստատման մասին թիվ 03-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Պետության կողմից հատկացված 177.4հազար դրամ /այլ ընթացիկ դրամաշնորհ որպես պետական աջակցություն/ գումարը ուղղորդել նախա հաշիվ 08/2/3-ի հոդված 4111-ին:

2) Հողի օտարումից ստացված 186.4հազար դրամ գումարը ուղղորդել ֆոնդային մաս նախա հաշիվ 08/2/3-ի հոդված 5112-ին:

3) Ֆոնդային մասի պահուստային ֆոնդի 229.3հազար դրամ գումարը ուղղորդել նախա հաշիվ 08/2/3-ի հոդված 5112-ին:

4) Բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 100.0հ.դրամ գումարը տեղափոխել ֆոնդային մաս ուղղորդել նախա հաշիվ 08/2/3-ի հոդված 5112-ին:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ------------------------ Աշոտ Ժորայի Աբրահամյան

------------------------ Սամսոն Ժորայի Ավետիսյան

------------------------ Արշակ Արամայիսի Գրիգորյան

------------------------ Վարդկես Հովհաննեսի Ղարիբյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կ.Տ.

2015թվականի հունիսի «26» գ.Դաշտ